# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ (18 ԱՊՐԻԼԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ, ՀՕ-528-Ն) 343 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը՝ գործի քննությունը հետաձգել մինչեւ 2010 թվականի հունվարի 14-ը, ժամը 11.00՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

1) 30.11.2009թ. ստացված՝ գործին առնչվող լրացուցիչ փաստաթղթերը ՍԴ անդամների եւ կողմերի կողմից ուսումնասիրելու համար անհրաժեշտ ժամանակ տրամադրելու նպատակով,

2) պատասխանող կողմից՝ ՀՀ Ազգային ժողովից պահանջել 10-օրյա ժամկետում սահմանադրական դատարան ներկայացնել սույն գործով զեկուցողի՝ ՍԴ անդամ Վ. Հովհաննիսյանի առաջադրած հարցերի (հարցերի ցանկը կցվում է որոշմանը) պատասխանները, որոնք բխում են սահմանադրական դատարանի պահանջով պատասխանող կողմի ներկայացրած լրացուցիչ փաստաթղթերի ուսումնասիրությունից, դրանք «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի, մասնավորապես՝ 7-րդ մասի, պահանջների հիման վրա ուսումնասիրելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ<br>ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

1 դեկտեմբերի 2009 թվականի<br>ՍԴԱՈ -112